Հավելված 2
2026թ. «01» «21»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11012/ԼԿԼՄՏ-10/26 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Տաշիր |
| Դրամաշնորհի N | ԴՏՊ-1160-11012/ԼԿԼՄՏ-10/26 |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| Ծրագրի իրականացման ժամանակատված | 01.01.2026 – 31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 – 30.06.2026 |
| Ներկայացման օր | 10.06.2026 |
| Հաշվետվության պատասխանատու | Գոհար Գևորգյան<br>Ծրագրի համակարգողի պարտականությունները կատարող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար**

| |
|---|
| **Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ: |
| **Միջոցառում 2.** Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում: |
| **Միջոցառում 3.** Սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրում: |
| **Միջոցառում 4.** Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում: |
| **Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում: |
| **Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար: |
| **Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ: |
| **Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում: |

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:

**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է շահառուների ընդունելության կազմակերպում և բազմամասնագիտական թիմի կողմից կարիքների բազմակողմանի գնահատում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, որի արդյունքում իրականացվել է թվով **4** շահառուների ընդունելություն, կարիքների գնահատում և փաստաթղթավորում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 2**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ 4 անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից կազմվել է թվով 4 սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **24** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 5**.

- 05.05.2026թ «Լիարժեք կյանք» ՀԿ –ն միացել է «Կայուն էներգիայի շաբաթ» նախաձեռնությանը և ակտիվ մասնակցություն ունեցել համայնքային ծառատունկին՝ կարևորելով շրջակա միջավայրի պահպանությունն ու համայնքային համախմբվածությունը: Միջոցառմանը մասնակցել են 9 շահառու և 3 ծնող:
- 15.05.2026թ Արտթերապիայի խմբակի թեման էր՝ «Իմ ընտանիքը», որի ընթացքում երեխաները նկարների միջոցով ներկայացրեցին իրենց ընտանիքները, պատմեցին ընտանեկան ջերմության, սիրո և միասին անցկացրած գեղեցիկ պահերի մասին: Միջոցառմանը մասնակցել են 7 շահառու:
- 22.05.2026թ. «Կայուն Էներգիայի շաբաթ» միջոցառման շրջանակներում «Լիարժեք Կյանք» ՀԿ-ում կազմակերպվել է «Մեր մոլորակը» թեմայով խմբային աշխատանք: Հանդիպման ընթացքում երեխաները ծանոթացան շրջակա միջավայրի պահպանման կարևորությանը, քննարկեցին, թե ինչ գործողություններ են վնասում բնությանը և ինչպես կարող են իրենց փոքրիկ քայլերով նպաստել մեր երկիր մոլորակի պահպանությանը: Միջոցառմանը մասնակցել են՝ 5 շահառու՝ կենտրոնից և 4 մասնակից՝ համայնքից:
- 27.05.2026թ. Կայուն էներգիայի օրերը շարունակվում են մեր կենտրոնում, օրը հետաքրքիր և ուսուցողական էր: Երեխաները թափոններից ստեղծել են զարգացնող խաղեր և պլաստիկե տարաների մեջ սերմեր ցանել՝ սովորելով բնության

պահպանման, վերամշակման և հոգատարության կարևորության մասին: Փոքրիկ այգիները նրանք մեծ սիրով տարան տուն՝ խոստանալով խնամել ու մշակել իրենց տնկած սերմերը: Միջոցառմանը մասնակցել են 7 շահառու:

- 01.06.2026թ. Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Տաշիրի համայնքապետարանը կազմակերպել էր միջոցառում, որտեղ հետաքրքիր համարներով ներկայացան ծաղրածուները, իսկ փրփուր շոուն և գունավոր հրավառությունը կրկնապատկեց երեխաների ուրախությունը, օրն ամփոփեցինք քաղաքային այգում՝ արտթերապիայով և կենտրոնի կողմից կազմակերպված հյուրասիրությունով: Միջոցառմանը մասնակցել են 12 շահառու և 5 ծնող:
- 25.06.2026թ. Կենտրոնի շահառուները մասնակցել են Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված « Սպիտակաձյունիկը» և « Կարմիր գլխարկը» ներկայացումներին: Միջոցառմանը մասնակցել են 9 շահառու և 2 ծնող:
- 26.06.2026թ. Կենտրոնի շահառուները մասնակցել են «Կայուն Էներգիայի օրեր» նախաձեռնության հաշվետու միջոցառմանը, որտեղ ներկայացրել են իրենց կատարած աշխատանքներ և կազմակերպած միջոցառումները: Միջոցառմանը մասնակցել են 7 շահառու:
- 28.06.2026թ. Ադապտիվ ֆիզկուլտուրայի խմբակի շահառուները խմբավար Սերոբ Աբրահայանի առաջնորդությամբ մասնակցել են Լոռու մարզի Գյուլագարակ համայնքում կազմակերպված բազկամարտի մրցաշարին: Միջոցառմանը մասնակցել են՝ 5 շահառ:

**Միջոցառում 6.** 22.06.2026 թ-ին կենտրոնի շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

- Թեմա՝ «Փոխօգնությունը, որպես միմիանց աջակցելու, խնդիրները հաղթահարելու միջոց» : Դասընթացը վարեց կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը:
- Թեմա՝ «Արհեստական բանականությունը, որպես ուսուցմանն օժանդակող միջոց»: Դասընթացը վարեց հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը:
- Թեմա՝ «Գլոբալ զարգացման հապաղում » : Դասընթացը վարեց կինեզիտ Լուսինե Ավետիսյանը:
- Թեմա՝ «Ինքնախնամքը, որպես աջակցող ռեսուրս»: Դասընթացը վարեց հոգեբան Լուսինե Կաֆիյանը:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 9 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 9.** Իրականացվել է գնահատում (ծրագրի 6-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Իրականացված գնահատման արդյունքում հստակ և պարզ դարձավ, որ Ծրագիրը միանշանակ աջակցում է շահառուներին, այդ են վկայում հարցված շահառուների 90 մոտ արձանագրված կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճը և գոհունակությունը՝ ստացած ծառայություններից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները**

| |
|---|
| Ստորև ներկայացվում է Տաշիրի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը FULL LIFE Tashir \| Facebook |

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել: |

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

- Ծրագրում ներառականությունը ապահովելու նկատառումից ելնելով կենտրոնի արտթերապիայի խմբակի ծառայություններից օգտվել են նաև թվով 7 հաշմանդամություն չունեցող երեխաներ համայնքից:
- 27. 04, 27.05, 26.06.2026 թթ-ին Տաշիրի կենտրոնի համակարգող Սերինե Ղազարյանը մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության Տաշիրի տարածքային կենտրոնի խորհրդի նիստերին:
- 21.04.2026թ. կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը և հատուկ մանկավարժ Աննա Պողոսյանը մասնակցել են «Ինչպես ազատվել մտահոգություններից և կառուցել առողջ միտք ուկյանք» թեմայով սեմինարին: Կազմակերպող՝ « Լիարժեք կյանք» ՀԿ
- 29.05.2026թ. Կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը և կինեզիստ Լուսինե Ավետիսյանը մասնակցել են « Հույս տուն» կազմակերպության կողմից կազմակերպած « Ֆունկցիոնալության գնահատման և մշտադիտարկման կարողությունների զարգացում» թեմայով դասընթացին:
- 27.06.2026թ. Կենտրոնի սոցիալական աշխատող Սերինե Ղազարյանը , կինեզիստ Լուսինե Ավետիսյանը , հեգեբան Լուսինե Կաֆիյանը մասնակցել են « Դեպի գիտակից ծնողավարում» ամենամյա համաժողովին: Կազմակերպող՝ « Ծնողական խնամք» ՀԿ

Ծրագրի համակարգողի պարտականությունները կատարող՝ Գ. Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ՝ Ս. Մաղաքյան

2026-07-11 16:04:37 GMT+04:00 mID